

ԹՈՎԱԾԱ ՄԵՄՈՓԵՅՈՒ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ:

ՀՐԱՏԱՐԱԿԵՑ ԻՒՐ ՅԱՌԱՋԱԲԱՆՈՎ Կ. ԼՈՍՏԱՆԵԱՆՑ

Թիֆլիս, Յովհաննէս Մախիրոսեանցի տպարան, 1892:

Քննաբանութիւնը Հայոց մէջ դեռ չունի մի արժէք. մարդիկ ձգտում են հասնել եւրոպական քաղաքակրթութեան, սակայն այն ինչ որ եւրոպայում յառաջագիմութեան հիմք է կազմում չէ որոնւում, զննւում և գործադրւում ինքնաբար քաղաքակրթութեւն համար, այլ սովորաբար միայն պատրաստի նորութիւնք են փնտրւում և ընդունւում յաճախ կուրաբար: Մեզ հարկաւոր է զորօր գրական ասպարիզում յառաջագիմութիւն, իսկ դորա գըլխաւոր հիմքն է քննաբանութիւնը: Եւրոպայում եթէ մի գիտնական գիրք է հրատարակում, նա ուղարկում է այդ իսկոյն և եթ բազմաթիւ գիտնական ամսագրերի և փափաքում է իւր աշխատութեան, որը նա ջանացել է բազմակողմանի կերպով հարստացնել և ընթերցողին դիւրութիւն տալ անձամբ հետազոտելու նոյն ճանապարհով, ասում եմ, նա փափագում է իւր աշխատութեան մանրամասն քննութիւնը և քննութիւնները կարգալթէ իւր յառաջագիմութեան թէ այլոց զգուշութեան և ուշագրութեան համար: Մեր մէջ այդպէս չէ. մարդիկ կարծում են թէ քննել մի գիրք՝ նշանակում է ցոյց տալ նորա սխալները, կամ պարսաւել գետինը կոխել կամ բարձրացնել՝ երկինք հասցնել: Եւ ահա դորանից է յառաջանում այն՝ որ հեղինակները կարծում են թէ հէնց որ մի քննութիւն լոյս տեսաւ, պարտ են իսկոյն և եթ պատասխան տալ, ջուր ծեծել, սուտն արդարացնել, սխալը ճշմարտել և քննաբանին մի լաւ ներկել՝ թէ ինչո՞ւ նա իւր նուաստութիւնը չէ բարձրացրել փառքի կատարը, չէ որ ինքն միակն է որ այդպիսի մի գիրք է գրել, թող ուրիշը դորա-

նից լաւագոյնը գրէ Իսկ բաղմարդիւն կամ բարձրադիրք մի անձի գրութիւնը քննաքանել խօսքապղծութիւն է համարուում մեր կեղծ սրբազգացների համար. ի՞նչպէս կարելի է դուրսը հայր Ալիշանի հաստափոր գրքերը քննել, դեռ պէտք է այդպիսի ստուարակարկառ գրքեր գրել՝ ապա թէ համարձակուել այն քննելու: Այդ է սլառնառը, որ մեր մատենագրաց սխալները մնում են մշտապէս, չկայ այլ ևս գիտաստութեամբ ընդունել այս ու այն հեղինակի ասածն, այլ բաւական է որ մէկ բարձրագիրը անձն մի բան ասում է, էհ այդ երկնքից եկած յայտնութիւն է, պէտք է լռութեամբ պահել, եթէ մինչև անգամ սեխն սպիտակ է ասում, պէտք է առաւել հեշտութեամբ ընդունել, որ «սպիտակ» «սև» է նշանակում: Չկայ նոյնպէս և ձգտումն դէպի նոր հետազօտութիւն, զի երիտասարդը այլ ևս չեն լստահանում նոր բան խուզել, ամենայն ինչ իւրեանց մեծերից ասուած համարելով. և ահա Հայոց պատմութիւնը, մատենագրութիւնն և ինչ, մնում են իբրև մենաշնորհ քանի մի անձանց և շղթայւում են անշարժ ժայռերի վրայ: Չամէնանի պատմութեան մէջ այնքան սխալներ կան, որոնք յաջորդներից ո՞վ մի անգամ նկատեց թէ իւր պաշտած պատմահայրը սխալուել է, այլ ջանացին արգարացնել անսխալականի այդ ճշտութիւն և մնալ նորա ասածների առանցքի վրայ պտտուելիս:

Քանի որ Եւրոպայի քաղաքակրթութիւնը մեզ ոգեւորում է, հաստատուենք նոյա յառաջագիմութեան հիմքերի վրայ և մեր ոյժերով յառաջ գնանք: Այնտեղ քննութեան աշխարհ է, ոչինչ չէ ընդունում հասկացող մարդն առանց քննութեան և այդ եղանակով է որ նորա ունեցածը գիտութեամբ է ձեռք բերուած և նա իւր գաղափարի անկմամբ ընկնում է: Քննաբանութեան նպատակն է՝ ցոյց տալ գրուածքի արժանիքն և պակասութիւնը. արժանիքը քաջալերել ազնւութեամբ, պակասութիւնը մօրակել համարձակօրէն. տեղեկութիւններ տալ հեղինակին և զարթեցնել նորա բարձիթող արած մօքերը, նոյն ասպարիզում գործողներին ևս ճանապարհ բանալ կարգացածն անձամբ քննելու, լաւը վերցնելու, սխալը խուսափել — պակասը լրացնել ջանալու —

որով և յառաջագիմութիւնս վասնորոյ Եւրոպական մասնագէտներ—պրօֆեսորներն են պարտաւորիչ կերպով քննաբանում այն գրքերն, որոնք խմբագրութիւնից ուղարկւում են նոցա ի ն ու է ր: Եւ ոչ թէ խմբագրութիւնը մի քննաբան են պահում ամենայն գրուածքի: Եթէ քննաբանութիւնը մեր մէջ զարգացման ամենաստոր աստիճանի վրայ անգամ կանգնած լինէր, չէին վերկենալ մեր գետոսակներն և գրականական հերոսներն իւրեանց քննաբաններին առանձին նամակով հայհոյիլ, որպէս արել են Կ. Պօլսի Իզմիրեան մրցանակի յանձնաժողովի քննիչների վերաբերմամբ: Քննաբանութիւնը նոյն իսկ գրութեան տարածման օգտակար է. նա զարկ կտայ հեղինակի հետազօտութեան, ոչ թէ յետ կմլէ կամ կսառեցնէ, նա կհամոզէ և նորուսներին, որ գրական աստարիզում իւրեանց համար ևս շատ բան կայ անելու և կվարէ նոցա գէպի իւրեանց արժանի ճանապարհը: Վասնորոյ գպրոցներում՝ գոնէ բարձր գասարաններում պէտք է աշակերտի քննական աչքը բաց պահել միշտ, բանալ և ոչ թէ ճնշել, փակել և ամենայն ինչ հեղինակութեան խորխօփեցուցիչ քողի տակ ծածկել. այդպէս միայն՝ պատանիները կստանան հետաքրքրելու շահ և կլինին գործասէրներ՝ իւրեանց ոյժն ու արժանիքը ճանաչելով, և ոչ թէ մարմնասէրներ, առանց գոյզն ինչ ինքնալստահութեան:

Այս նկատութիւնը ոչ թէ ամենքի այլ բաղմաց համար են, որպէս տեսնում եմ մասնաւոր գէպերից: Պէտք է յուսալ որ քննաբանութիւնը յաճախելով կբռնէ իւր արժանաւոր տեղը նաև նոցա մէջ, որոնք քննաբանութիւնից սոսկում են, զի դժբա ևս կզգուշանան փտրանք կողմեր գգուելուց: Ասում եմ՝ ոչ թէ ամէնքի՝ վասն զի նոքա, որոնք գիտութեան որոշ աստիճանի վրայ են, ճանաչում են ինքեանց և իւրեանցը:

Թովմայ Մեծօփեցու յիշատակարանը պատմում է կաթողիկոսութեան վերահաստատուիլն ի Ս. Էջմիածին — Կիրակոս կաթողիկոսի ընտրութիւնն և ապա գահընկէց լինելը: Կիլիկիայում տիրող անկարգութիւնը, որոնց պատճառներն էին մահամերձ թագաւորները, զի անկարող լինելով ժողովրդի բարեկե-

ցութեան համար աշխատիլ և լոյծ կեանք վարելով, ձգտում էին իւրեանց նախնեաց այն է՝ ազգային սուրբ ժառանգութեան գնով արքունիքի ապահովութիւն գտնել խաբեբայ օտարից և գաղափար ու պատիւ զոհումէին օտարի քմահաճութեանց, ապականելով ազգի սրբութիւնը և վիրաւորելով նորա քնքշագոյն զգացմունքները: Թովման աչք ունէր այս տեսնելու, ուստի և տոչորւում էր մօտալուտ վտանգից վախենալով. ոչ միայն ներկան, այլ և անցեալի վայրիվերոյ լուրերը միանում տանջում էին նորան, և ահա նա հոգուով սուղւում է այդ մտածմունքի մէջ և ինչ բարեպաշտութեամբ նա ազգի փրկութիւնն էր ակնկալում, ըստ այնմ ևս իրերը ելք են ստանում նորա երկնաթռիչ հոգու մէջ: Նա իւր գաղափարակիցներով գալիս է Ս. Էջմիածնի ս. ճրագը վառելու: Ս. Լսւսաւորչի շողառատ ջահը վայել պատուանդանի վրայ գնելու: Նորա սրտի հետ բաբախում էր և ազգի սիրտը. «եկաք, ասում է նա, ի գիւղաքաղաքն Նրւան. աստ էր տեսանել զուրախութիւն և ցնծութիւն ամենայն մերային ազինս. զի փողն զանգակացն գոչէր, երիտասարդքն գոչէին, ծերքն ազադակէին և զԱստուած ցնծութեամբ օրհնէին, մանկունքն խայտային, կանայքն երկրպագութեամբ և լալով զամենեսեան զարհուրեցուցանէին» . . . (էջ 68), Դիպաւ ընտրութիւնն, ուրախութիւնը մեծ էր. համոզմունք ևս էր «թէ ի կողմանէն վարագայ նորոգի ազգս Հայոց և ս. կաթողիկէն Վաղարշապատու» (76):

Որքան ոգւորւում է հեղինակը Երրակոսի ընտրութեամբ, նոյնքան դժկամակում է նորա գահընկէց լինելուց: «Աստ է տեսանել, գոչում է նա, զաղէտ տարակուսանացն և զահագին վնաս մեղանչական ազգիս մերոյ՝ վարդապետաց, եպիսկոպոսաց և կարգաւորաց մերոց ազգիս դառնութեանց. զի Քրիստոս յանհաւատ հրէիցն խաչեցաւ յերուսաղէմ, յէջմիածինն ի հաւատացեալ կարգաւորաց» (81): Սակայն պէտք չկայ այդ փոքրիկ բայց ոգեւիր յիշատակարանն ամփոփելու. ընթերցողը թող անպատճառ ինքը կարգայ, օգուտ շատ կունենայ:

Ամբողջ գրքոյիւր 88 էջ է. յիշատակարանը միայն 37 էջ, իսկ

46 էջ պարունակում է հրատարակչի մի յօդուածը՝ «Ս. Լժմիած-
նի վերանորոգութիւնն ին զարում»։ Այս մի կարճ ամբողջութեան
է Կիլիկիոյ կաթողիկոսութեան և Ս. Լժմիածնի վերանորոգու-
թեան պատմութեան, հիմնուած Ստեփաննոս Օրբէլեանի, Չամ-
չեանի և Թովմայ Մեծօրեցոյ աւանդածների վրայ։ Սակայն թէ
Չամչեան և թէ Օրբէլեան այնքան լստահելի չեն, որ կարենանք
հեղինակի հետ ասել Կիլիկիոյ 8 կաթողիկոսներից «նշանաւոր-
ներն»։—ընկան արտաքին ազդեցութեան տակ և կողմնակի շա-
հերը գերադասեցին բուն եկեղեցոյ աւատական շահերից՝ և թէ
«Սսի» կաթողիկոսարանի անունը կապուած է անհարապատ,
գիւրափոփոխ եկեղեցին ժամանակի հանգամանքներին ծառա-
յեցող օտարամոլ և վնասակար ուղղութեան հետ։ Սսի առա-
ջին կաթողիկոս Գրիգոր է. Անաւարդեցին ինքն եղաւ այդ ուղ-
ղութեան հեղինակն և աւանդողն իւր յաջորդներին»։ (էջ.
8—9)։ Գրիգոր Անաւարդեցոյ մասին Օրբէլեանի պատմածները
պէտք է գեռ խիստ քննութեան ենթարկել, զի նա գատապար-
տում է Անաւարդեցուն բոլորովին առանց հիմքի սկսելով իւր
պատմածանքները. մենք այդ կտեսնենք իսկոյն ¹⁾։ Հեղինակն ա-
սում է որ Գրիգոր է. «ջնջեց ՍՆ - Լեւան 1114 թուի եկեղեցա-
կան ժողովի բանադրանքն Աղթամարի վրայ» և յենում է Չամ-
չեան Պատմ. Գ. եր. 289 ի, մինչդեռ անդ ասուած է. «յաւուրս
սորա (Անաւարդեցուն) և Կաթի ժամանակս նախընթացի սորին
Ստեփաննոս կաթողիկոսի՝ Հեղու-մ աբայ ետ բառնալ զնորման
աթոռոյն Աղթամարայ» . . . «Եւ Գրիգոր կաթողիկոս բազում
սէր եցոյց յայնմ հետէ առ նոյն աթոռ»։

Հեղինակը գնում է ծագատիկը 1294ին, որ չէր կարող լի-

1) Թէ ինչպէս էին շարականներն ընդունուած եկեղեցում, դեռ հե-
տադասելի է. Անաւարդեցոյ շարականք հեռի են զորօր. Շնորհալու շա-
րականների գեղեցկութիւնից, Շարականք խիստ շատ կան անգործածական,
որոնք ժողովել է հայր Սահակ Ամատունի և յուսանք որ մանրամասն ծա-
նոթութիւններով ի լոյս կընծայէ։

ներ. իսկ Կիլիկիոյ պատմիչք նշանակում են 1292 ին 4), հայրապետական աթոռի թափուր ժամանակ. զատկի ժողով գումարողն ևս ինքն Հեթումն է եղել, որպէս խոստովանում է իւր ոտանաւորի մէջ 2): Յայտ է որ Օրբէլեանի պատմածները լոկ գատարկ լուրեր են: Եթէ լաւ կարգանք Օրբէլեանի առ Անաւարդեցին գրած թուղթը, կտեսնենք որ նա ևս չէ հաւատում այն դռնէ դուռն շրջող և կաթուղիկոսին հոռում կոչող «գրաբաններին», բաւական է միայն յիշել թղթի վերնագիրը. «որ վասն կասկածանաց ինչ ակնածեալ 3) եպիսկոպոսացն աշխարհիս՝ գրեցին զայս նամակ ուղղափառութեան» . . . Իսկ Օրբէլեանը համարձակում է ասել թէ Անաւարդեցին է «հաւանեցուցեալ զթագաւորն և բռնութեամբ տօնեաց և ետ տօնել ամենայն աշխարհին Կիլիկեցւոց»: Միթէ կարելի է ուրեմն Օրբէլեանի զրոյցներն ընդունել իբրեւ բացառիկ աղբիւր ճշմարիտ պատմութեան: Դեռ ուրիշ տեղ կտեսնենք՝ որ Անաւարդեցուն վերագրուած թուղթն ևս վաւերականութիւն չունի 4): Ստում «Ժողովներ» չեն եղել, այլ աբքայական ամբօխումներ, և խռովութեանց «բուն» հեղինակը Սի կաթուղիկոսարանը, չէր այլ արքունիքը: Իսկ հետագայ պատմութիւնը, քանի որ գորա աղբիւրը միայն ջամլեանն կամ Ապարանցին է, խիստ տարակուսական է և դեռ մեծապէս կարօտ է լուսաբանութեան:

1) Չորօր. Հեթում պատմիչն ասում է. յայտմ ամի (ՌՄՂԲ) եղև մոլորումն զատկի, և հրամանաւ կաթուղիկոսին տէր Ստեփաննոսի, արարին ժողով ի քաղաքն Մսիս եպիսկոպոսաց և վարդապետաց» . . . Մատենադ. Ս. Էջմիածնի. № 1696. Կայ և տպագրուած ի Վենետիկ 1842. Թաթարաց պատմութեան կից. Տես և Չամչեան. Գ. էջ. 286:

2) «Արարատ» 1869. էջ. 39—40.

3) Գրչագիր ի մատենադարանիս ևս. № 1720.

4) Տես, իմ գերմաներէն գրուածքը. Die armenische Kirche in ihren Beziehungen zur Byzantinischen. Leipzig. Gustav Fock. 1892 էջ. 119. Տես և վերև, էջ. այդ մասին պիտի ընդարձակ խօսենք:

Ամբողջ գրութիւնը յանկուժէ մի գեղեցիկ եզրակացութեամբ. «այն օրից, երբ Ս. Էջմիածինը թողած իւր այդ մայրական կոչումը կրնարէ մասնաւոր, այսպէս ասենք՝ խորթ մօր, ուղղութիւն, այն օրից, երբ Հայոց մայր լինելուց դադարելով՝ Ս. Էջմիածինը կը ծառայէ կուսակցական շահերի, այն օրից և բնականաբար կը սկսուի նորա օրհասական անկումը» . . . :

Ի վերջոյ յոյս ունինք, որ յարգելի հեղինակն իւր երկար տարիների հետազօտութիւնք հետզհետէ կտայ մեզ: Պարիզում ազգային մատենադարանում կայ մի ընտիր գրչագիր՝ Մեծօրհեցու պատմութեան և յիշատակարանի, որ Կ. Վ. Շահնազարեանը չէ ունեցել. անշուշտ հեղինակը, քանի որ մտադիր է այդ պատմութիւնը հրատարակելու, կգիմէ այն տեղի ուսանողներից մէկին և ընդօրինակել կամ տպագրի հետ համեմատել կտայ: (Յիշատակարանի մի մասն արտագրել էի, երբ լսեցի այս հրատարակութեան լուրն և դադարեցրի ժամանակի խնայելով): Կարելի է գիմել ընթերցարանը Rue Cujas № 20 կամ Պ. Կ. Տէր Մկրտչեանին կամ Պ. Պետրոս Կիւրեղեանին:

Ա. ՏԷՐ ՄԻՔԵԼԵԱՆ